

կը թուէ զասոնք Մանգակունին եւս՝ սոյն նիւթոց արգելմամբ (աստ, 415-6):

Սակայն խոսքովկայ դարուն փափուկ օրերն աւելի են քան յառաջ: «Ո՛վ չար վաճառաշահութիւնն, կը ձայնարկէ նա. ուխտել յիսուն օր՝ (որ է եօթ շաբաթ), եւ պահել կրեւորն, եւ Աստուծոյ ստել» (քառ.): Այս հաշուով կը լուծուէին ոչ միայն առաջին վեց եօթնեկաց երկու օրերը, այլ ես կը հետեւցնեմ՝ թէ ամբողջ աւագ շաբաթն ալ, որով յիրաւի կը քննալին պահելի երեսուն օր. թէեւ այս հետեւութիւնս՝ ինչպէս եւ երեսունն՝ անծանօթ են ուրիշ մատենագրաց քով:

Խոսքովիկ կը յարէ՝ թէ «մեծ քաղաքն Հոովմ», Եփեսոս եւ Աղեքսանդրիա առաքելական աւանդութեամբ անընդհատ կը պահեն մինչեւ Զատիկին օրը, Ծաղկազարդն ալ միասին. նոյնպէս կ'ընէին, կ'ըսէ, յառաջագոյն երուսաղեմացիք եւս, որ ապա թուլացան: Իւր այս տեղեկութիւնը սակայն օտարաց մասին՝ անմիաբան եւ րոպական հնախօսութեան հետ, վերապահութեամբ ընդունելի է: Մինչ դեռ աւելի դրական է իւր վկայութիւնը, եւ կրնանք անկասկած հաւատալ՝ թէ Հայոց քով փափուկ օրերը պահել՝ «միայն ծանր թուին մարմնասիրաց». իսկ առաքիլնի այրեր ու